ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N26/01

«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության
խորհրդի նիստի

ք. Երևան 5 մարտի 2026թ.

Մասնակիցների ցուցակ՝

1. Աննա Կարախանյան
2. Անդրանիկ Ալեքսանյան
3. Արամ Վերդյան
4. Իգոր Մկրտումյան
5. Կատարինե Գևորգյան
6. Նարինե Դերձակյան
7. Վահան Հովսեփյան
8. Միսակ Խաչատրյան
9. Քրիստինա Հակոբյան
10. Վեսմիրա Հարությունյան

Նիստը նախագահում էր Իգոր Մկրտումյանը: Նիստի քարտուղար ընտրվեց Վեսմիրա Հարությունյանը: Օրակարգի վերաբերյալ հնչեցին առաջարկություններ, արդյունքում հաստատվեց հետևյալ օրակարգը՝

Օրակարգ՝

1. **Վարդան Ալեքսանյանին «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպությանն անդամագրելու մասին**
2. **«Մենք Քոնսալթինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության որպես «.am» և «.հայ» դոմենային անունների տիրույթների ռեգիստրարի կարգավիճակը դադարեցնելու մասին**
3. **«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության մի շարք անդամների «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպությունից հեռացնելու մասին**
4. **«Հայաստանի օպերատորների միություն» հասարակական կազմակերպությունում «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության անդամակցությունը դադարեցնելու մասին**

1. **Վարդան Ալեքսանյանին «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպությանն անդամագրելու մասին**

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ Քրիստինա Հակոբյանը: Նա նշեց, որ «Քրոս Նեթ» ՍՊԸ-ի տնօրեն Վարդան Ալեքսանյանը դիմել է «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ին վերջինիս անդամագրվելու խնդրանքով: Առաջարկվեց բավարարել դիմումը: Առաջարկը դրվեց քվեարկության և ընդունվեց միաձայն:

Որոշում՝ ***1. Բավարարել Վարդան Ալեքսանյանի դիմումը և ընդունել նրան որպես «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության անդամ:***

2. «Մենք Քոնսալթինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության որպես «.am» և «.հայ» դոմենային անունների տիրույթների ռեգիստրարի կարգավիճակը դադարեցնելու մասին

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ Քրիստինա Հակոբյանը՝ նշելով, որ վերոնշյալ կազմակերպությունից ստացվել է դիմում իր որպես «.am» և «.հայ» դոմենային անունների տիրույթների ռեգիստրարի կարգավիճակը դադարեցնելու մասին: Նշվեց նաև, որ ընկերությունը խնդրել է դադարեցնել իր՝ որպես ռեգիստրարի կարգավիճակը 2026 թվականի մարտի 10-ից: Առաջարկվեց բավարարել դիմումը: Առաջարկը դրվեց քվեարկության և ընդունվեց միաձայն:

Որոշում՝

1. ***Դադարեցնել «ՄԵՆՔ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության որպես «.am» և «.հայ» դոմենային անունների տիրույթների ռեգիստրարի կարգավիճակը:***
2. ***Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի մարտի 10-ից:***

3. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության մի շարք անդամների «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպությունից հեռացնելու մասին

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ Քրիստինա Հակոբյանը: Նա նշեց, որ «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության 23 անդամներ՝ Գրիգորի Սաղյանը, Վիկտորիա Բաբաջանյանը, Արամ Սարգսյանը, Անի Խաչատրյանը, Տիգրան Էդգարի Կարապետյանը, Տիգրան Կարապետի Կարապետյանը, Կարեն Արթենյանը, Աթանես Մարգարյանը, Ծովինար Գրիգորյանը, Ժաննա Սիմոնյանը, Մերի

Սիմոնյանը, Քնարիկ Հարությունյանը, Նարեկ Մուրադյանը, Վլադ Գևորգյանը, Վահան Կոստանյանը, Էրիկ Մուրադյանը, Մուշեղ Բաղդասարյանը, Արսեն Համբարձումյանը, Արթուր Եփրեմյանը, Մարինե Հովհաննիսյանը, Ալիսա Հովհաննիսյանը, Աննա Արծրունին, Լուսինե Հակոբյանը չեն վճարել 2026 թվականի անդամավճարը: Առաջարկություն հնչեց տարեկան անդամավճարը չվճարելու համար հեռացնել այդ անձանց կազմակերպությունից: Առաջարկությունը դրվեց քվեարկության և ընդունվեց ձայների 9 կողմ, 1 դեմ, 0 ձեռնպահ հարաբերակցությամբ:

Որոշում՝ ***1. 2026 թվականի անդամավճարը չվճարելու համար «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպությունից հեռացնել «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության անդամներ՝ Գրիգորի Սաղյանին, Վիկտորիա Բաբաջանյանին, Արամ Սարգսյանին, Անի Խաչատրյանին, Տիգրան Էդգարի Կարապետյանին, Տիգրան Կարապետի Կարապետյանին, Կարեն Արթենյանին, Աթանես Մարգարյանին, Ծովինար Գրիգորյանին, Ժաննա Սիմոնյանին, Մերի Սիմոնյանին, Քնարիկ Հարությունյանին, Նարեկ Մուրադյանին, Վլադ Գևորգյանին, Վահան Կոստանյանին, Էրիկ Մուրադյանին, Մուշեղ Բաղդասարյանին, Արսեն Համբարձումյանին, Արթուր Եփրեմյանին, Մարինե Հովհաննիսյանին, Ալիսա Հովհաննիսյանին, Աննա Արծրունուն, Լուսինե Հակոբյանին:***

4. «Հայաստանի օպերատորների միություն» հասարակական կազմակերպությունում «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության անդամակցությունը դադարեցնելու մասին

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ Արամ Վերդյանը՝ ներկայացնելով այն շարժառիթները, որոնց հիման վրա առաջարկվում է դուրս գալ «Հայաստանի օպերատորների միություն» ՀԿ-ի անդամակցությունից:

Քննարկման ընթացքում կազմակերպության խորհրդի անդամների կողմից ներկայացվեցին տարբեր տեսակետներ, առաջարկվեց հնարավորություն տալ «Հայաստանի օպերատորների միություն» ՀԿ-ի ներկայացուցչին (ներկայացուցիչներին) ներկայացնելու իր (իրենց) տեսակետը: Քննարկման

արդյունքում որոշվեց հետաձգել հարցի քննարկումը և տրվեց հետևյալ արձանագրային հանձնարարականները՝

Արձանագրային հանձնարարական՝

1. «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի նախագահ Ի. Մկրտումյանին՝ մինչև 2026 թվականի մարտի 20-ը հրավիրել «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի խորհրդի նիստ «Հայաստանի օպերատորների միություն» հասարակական կազմակերպությունում «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության անդամակցությունը դադարեցնելու մասին հարցը քննարկելու նպատակով:

2. «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի տնօրեն Ա. Ալեքսանյանին՝ պատրաստել գրություն «Հայաստանի օպերատորների միություն» ՀԿ-ին՝ հրավիրելով վերջինիս ներկայացուցչներին մասնակցելու «Հայաստանի օպերատորների միություն» հասարակական կազմակերպությունում «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության անդամակցությունը դադարեցնելու մասին հարցի քննարկմանը:

Նիստի նախագահող՝ **Իգոր Մկրտումյան**

Նիստի քարտուղար՝ **Վեսմիրա Հարությունյան**